

իր ժամանակը : Խազաւորներն յարգութիւն ու բանաստեղծները պատիւ կու տային իրեն , և ամենէն աւելի ծանր վէճերու մէջ վճռատու կ'ընտրուէր : Այսպիսի պաշտօնով մը ահա Ա'իննէսինկէրաց կրուոյն մէջ մտաւ՝ անդառնալի վճիռ մը տալու համար . և նոյն առթին մէջ ալ ցըցուց իր ընդհանուր գիտութեան ընդարձակութիւնը :

Հետաքրքրական վիճակագրուրիւն :

Ա'նգղիացի բանասիրական օրագրի մը մէջ հետևեալ տեղեկութիւնները կը կարդանք Ա'եծին Ա'րիտանիոյ երկաթուղեաց վրայ :

Ա'նգղիացի միացեալ պետութեան մէջ 8,024 մղոն (1,288 բիւրամդ . 30) երկայն երկաթուղիք կան բոլորովին լրացած , որոնք ծայր ծայրի բերելով ու մէկ գծի վրայ , ամբողջ երկրագունտս կը շրջապատեն ու կ'աւելնան : Այս ուղիես արժեցին 286 միլիոն լիրա սգէուլին : Ա'եծագործութեանց կողմանէ Ա'նգղիա ունի 50 մղոն (80 բիւրամդ . 46 հազարամդ .) երկայնութեամբ ստորերկեայ ճամբաներ . մայրաքաղաքին շրջականները միայն 11 մղոն (17 հազարամդ . 70) երկայն այսպիսի ճամբաներ կան : Հողէ ամբարտակները կը չափեն 550 միլիոն խորանարդ եարտ , որոնք կրնան ձեւացընել բուրգն մը մղոն ու կէս բարձր , ունենալով խարիսխ աւելի լայն քան զապարտէզն Ա'էնդ-Շ'էյմ : Ծոգեշարժ կարաւանները տարուէ տարի կ'ընթանան 80 միլիոն մղոն (12,874, 519 բիւրամդ .) այս ճանապարհացու վրայ , բաղկանալով 5,000 տեղաշարժ մեքենաներէ և 150 հազար վահոններէ : Տարին կը սպառուի 2 միլիոն դոն կամ տակառաշափ հանքածուխ (դոնն է 1,016 հազար .) . որով մէկ րոպէի մէջ 4 դոն հանքածուխ կը շոգիացընեն 20 դոն ջուր :

Ա'մէն տարի 20 հազար դոն երկաթ կը գործածուի նորոգութեանց համար ,

և 300 հազար գերան ճամբանները գոտեւորելու : Այս երկաթուղեաց վրայ կը գործածուին ուղղակի կերպով 90 հազար ոգիք , իսկ երկրորդաբար 40 հազար ոգիք , ընդ ամէնը 150 հազար ոգիք . որոնք իրենց կանամբքը և որդւովք կը կազմեն ժողովուրդ մը 500 հազար ոգիէ բաղկացեալ , որ է ըսել Ա'նգղիայ բոլորական բնակչաց 1 առ 50 երկաթուղեաց կը վերաբերի : Համին 1854 , Արիտանական երկաթուղիքը 111 միլիոն ճանապարհորդ տեղափոխեցին , և ըստ միջական հաշտուի իւրաքանչիւր ճանապարհորդ ընթացաւ 12 մղոն . նոյն տարուան մուտքն եղաւ 20,245,000 լիրա սգէուլին : Պատահարաց թիւն ինչուան հիմա ելաւ 1 առ 7,195,343 ճանապարհորդ : Այլքտրական հեռագրութիւնն ալ կը գրաւէ 7,200 մղոն , և ունի գոնէ մինչեւ հիմա 36 հազար մղոն երկայնութեամբ թել :

Վիճակագրուրիւն Միացեալ նահանգաց Ամերիկոյ :

Ը ատ անգամ Բազմավիափս էջերուն մէջ , ինչպէս յայտնի է ընթերցողաց , վիճակագրական տեղեկութիւններ զրած ենք այլ և այլ տերութեանց վրայօք , որոնք կը լսենք թէ հածոյ կ'անցնին ընթերցողաց . աս պատճառաւ լաւ համարեցանք կարգով գոնէ գլխաւոր տէրութեանց վրայ չափաւոր տեղեկութիւններ տալ աս տարուան ընթացքիս մէջը . և որովհետև Ա'մերիկայի տէրութեանց վրայ քիչ անգամ խօսուած է , անոր համար աս անգամուս Ա'իացեալ նահանգաց վրայ կը խօսինք որ զրեթէ հիմակուան աշխարհքիս առաջին կարգի տէրութեանց մէկը կը կրնայ սեպուիլ : Ա'րդ Ա'իացեալ նահանգաց սահմանը Ա'րևելքէն Ա'րևանդեան (Վլկիանոսն է , Հարաւէնն Ա'նիգոյի ծոցը , Հարաւային-Ա'րևմուտքէն՝ Ա'նիսիկոյի համարակապետութիւնը , Ա'րևմուտքէն՝ Այաղաղական